Տեխնոլոգիա 2

Աշխատանքային գիրք-տետր

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 2

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

հանրակրթական ուսումնական հաստատությունների երկրորդ դասարանի սովորողների համար

Երևան-2024

ՀՏԴ
ԳՄԴ

Տեխնոլոգիա 2 աշխատանքային գիրք-տետր: Օրդյան Ն. Ա., Պետրոսյան Ս. Ս., Օհանյան Հ.Վ./ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. - Եր.: Էդիթ Պրինտ, 2024, 48 էջ:

Աշխատանքային գիրք-տետրը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 29.02.2024 թվականի 284-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Աշխատանքային գիրք-տետրը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Հովյան Գ. Ռ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սարատիկյան Լ. Հ.

Հեղինակներ՝
Օրդյան Ն. Ա., տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Ս. Ս.
Օհանյան Հ. Վ.

Համակարգչային ձևավորում՝ Ստեփանյան Ա. Ռ.

Սույն աշխատանքային գիրք-տետրի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների երկրորդ դասարանի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին «Տեխնոլոգիա» առարկայի ուսումնառության ընթացքում լրացուցիչ, առավել պարզեցված և հարմարեցված ուսումնական նյութերի տրամադրումն է:

ISBN

ՀՏԴ
ԳՄԴ

Տպաքանակ՝ 150 օրինակ

©Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2024

ՆԱԽԱԲԱՆ

Տեխնոլոգիայի աշխատանքային գիրք-տետրի նպատակն է աջակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին՝ յուրացնելու երկրորդ դասարանի առարկայական դասընթացը: Այն մշակված է՝ հիմք ընդունելով «Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչը, ծրագիրն ու դասագիրքը: Աշխատանքային գիրք-տետրը ներառում է առաջադրանքներ, որոնք նախատեսում են տարբեր նյութերի հետ աշխատանքներ: Մեծ տեղ է հատկացված սովորողների ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների, ինչպես նաև՝ գործնական աշխատանքների իրականացման խթանմանը:

Տեխնոլոգիայի աշխատանքային գիրք-տետրը բաղկացած է առաջադրանքներից և հավելվածից: Վերջինս ներառում է մկրատով աշխատելու առաջադրանքների կատարման համար նախատեսված բաժինը: Յուրաքանչյուր առաջադրանքին կից ներկայացված են պայմանական նշաններ, որոնք կուղղորդեն սովորողին ինքնուրույն ըմբռնել տվյալ պահանջը: Միաժամանակ հարկ է նշել, որ, հաշվի առնելով սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները, առաջադրանքների բովանդակությունը պետք է պարզաբանվի մանկավարժի, ուսուցչի օգնականի կամ ծնողի կողմից:

Աշխատանքային գիրք-տետրին կից մշակված ուսուցչի ուղեցույցը կաջակցի մանկավարժին մեթոդական առումով առավել հստակ պատկերացնելու յուրաքանչյուր առաջադրանքի բովանդակությունը, քայլերի կատարման հաջորդականությունը, իր կողմից լրացուցիչ մշակվող նմանատիպ հարմարեցումների սկզբունքները, ինչպես նաև՝ կապը առարկայական ծրագրի, չափորոշչի և դասագրքի հետ:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Աշխատանք մատիտներով

- Ուսումնասիրության նյութ

- Աշխատանք սոսնձով

- Աշխատանք հավելվածի գունավոր թղթերով

- Աշխատանք ծեփոնով (պլաստիլինով)

- Աշխատանք սերմերով

- Աշխատանք մկրատով

- Նշված տեղից թուղթը կտրել

- - · - - · - - - Նշված տեղից թուղթը ծալել

Նյութեր և հատկություններ

Մեզ անհրաժեշտ են լինելու սպիտակ և գունավոր թղթեր, ծեփոն, բնական նյութեր՝ չորացրած ծառերի տերևներ, սերմեր, արհեստական նյութեր՝ փայլաթիթեղ, ֆոամիրան, մանածագործական նյութեր՝ թելեր, կտոր և այլն:

Առաջադրանք 1. Ծանոթացիր նյութերին, անվանիր դրանք: Գծով միացրու՛ նյութը համապատասխան զամբյուղին:

Աշխատանք բնական նյութերով

Առաջին դասարանում դուք աշխատել եք չորացրած տերևներով և ծաղիկներով: Բնական չորացրած նյութերից կարելի է պատրաստել գեղեցիկ կոմպոզիցիաներ: Կոմպոզիցիան պատրաստում են հետևյալ հաջորդականությամբ.

1. Չորացրած տերևների վրա սոսինձ քսել վրձինով:
2. Դրանք տեղադրել համապատասխան տեղում և վրան թուղթ դնելով սեղմել մի փոքր:
3. Երբ բոլոր մասնիկները սոսնձված են, հարկավոր է աշխատանքը թղթով ծածկել:
4. Ծանր առարկա, օրինակ՝ գիրք, դնել վրան և թողնել մինչև չորանա:



Ուսումնասիրում ենք տարբեր նյութերի հատկությունները: Հատկությունը դա նյութի տեսակն է, օրինակ՝ թուղթը թեթև է, հարթ է:

Թեթևն ու հարթը հատկություններ են, ցույց են տալիս, թե ինչպիսին է նյութը կամ առարկան:

Առաջադրանք 2

ա) Շոշափիր տարբեր նյութեր՝ թուղթ, ծեփոն, սեղան, գրիչ, ռետին, պայուսակ և այլն: Ասա, ինչ ես զգում: Ո՞րն է դրանցից ավելի ծանր, իսկ որը՝ թեթև: Ո՞րն է փափուկ, իսկ որը՝ կոշտ:

Ծանր – թեթև
փափուկ – կոշտ

բ) Նայիր շուրջդ, անվանիր/ցույց տուր ծանր առարկաները, թեթև առարկաները, փափուկ առարկաները և կոշտ առարկաները:

գ) Յուրաքանչյուր վանդակի մեջ գրիր այն հատկությունները, որոնք բնորոշ են տվյալ նյութին:

Քար

Թուղթ

Ծեփոն

Փայտ

Բամբակ

Թել

Առաջադրանք 3

ա) Ասա՛, ո՞ր առարկաներն են ավելի հեշտ ***ձևափոխվում՝ դեֆորմացվում***: Որոնք են մնում ***անփոփոխ***:
Լրացրու՛ աղյուսակը: (Հավելված 1)

Հեշտ են ձևափոխվում՝	Դժվար են ձևափոխվում՝

բ) Խոսի՛ր դասընկերոջդ հետ՝ արդյո՞ք ցանկացած նյութից հնարավոր է ամեն ինչ պատրաստել: Օրինակ՝ քարից գնդակ պատրաստել, կամ էլ թղթից՝ աթոռ:

Առաջադրանք 4

Օգտվելով նկարից՝ հաջորդ էջի վրա չորացրած տերևները սոսնձելով պատրաստիր ապլիկացիա: Կարող ես ընտրել պատկերներից մեկը կամ մի քանի քանիսը:

Առաջադրանք 5

Չորացրած տերևները սոսնձելով պատրաստիր նկարում պատկերված կոմպոզիցիան: Կարող ես սոսնձել անմիջապես նկարի վրա:

Առաջադրանք 6. Ծեփոնից խճանկար

Ծեփոնի և տարբեր սերմերի օգնությամբ ձևավորիր պատկերը և ստացիր գեղեցիկ նախշ:



Առաջադրանք 7

Հավաքիր բնական նյութեր՝ կաղին, կոն, տերևներ, ճյուղեր, սերմեր: Նայիր նկարին և վերհիշիր դրանց անվանումները: Ո՞ր ծառերից են դրանք ստանում: Նայիր նկարին և մատիտով միացրու ծառը և դրա սերմը:

Առաջադրանք 8. Հետազոտական աշխատանք

Հավաքիր կոներ և դրանց հետ փորձ կատարիր: Եթե քո հավաքած կոները շատ բացված են, կարող ես դրանք դարձնել փակված՝ կես ժամով տեղադրելով ջրի մեջ:

Ծեփոնից և բնական նյութերից կերպարներ (կենդանիներ)

Առաջադրանք 9

ա) Նշված հաջորդական քայլերով պատրաստիր ոզնի: Կարող ես նաև ծեփոնից մրգեր պատրաստել և դնել ոզնու վրա:

ՈԶՆԻ



բ) Նկարում պատկերված քայլերի հաջորդականությամբ պատրաստիր արմավենի կոնից և ծեփոնից:

ԱՐՄԱՎԵՆԻ



գ) Նկարում պատկերված քայլերի հաջորդականությամբ պատրաստիր կրիա վայրի շագանակից և ծեփոնից:

ԿՐԻԱ



Առաջադրանք 10. Ծեփոնից տնակ

Ծեփոնից պատրաստիր տարբեր երկարության բարակ ձողեր և նկարի օգնությամբ հավաքիր տնակ:

Պատրաստման հաջորդականությունը.

1. Հավելված 2-ից մկրատով կտրիր ձողերի չափերի վերահսկման գծապատկերը:
2. Ծեփոնից պատրաստիր բարակ ձողեր՝ գծապատկերի չափերով:
3. Նշված հաջորդականությամբ հավաքիր տնակ.





Առաջադրանք 11. Ծեփոնից բաժակ

Պատրաստիր ծեփոնից բաժակ՝ նկարում պատկերված քայլերի հաջորդականությամբ:

1. Ծեփոնը ափերիդ մեջ գլորելով պատրաստիր 6 հատ տարբեր երկարության բարակ ձողեր:

2. Դրանցից պատրաստիր օղակներ՝ ծայրերը միմյանց միացնելով:

3. Մի կտոր ծեփոնից պատրաստիր բաժակի հատակը և վրան հերթով ամրացրու օղակները՝ փոքրից մեծ:

4. Պատրաստիր բռնակը և ամրացրու բաժակին:

Առաջադրանք 12 Ծեփոնով պատրաստիր տարածական կոմպոզիցիա:

Քո պատրաստած պինգվինը կարող ես պահել դասարանի անկյունում:

Պատրաստման հաջորդական քայլերը.

1	1. Ծեփոնից ծեփիր երկու տարբեր չափերի գնդիկներ:	6	6. Սպիտակ ծեփոնից շրջանաձև բարակ փոր ծեփիր և ամրացրու մարմնին:
2	2. Ավելի մեծ գնդիկը ծեփիր օվալաձև, որը կլինի մարմինը:	7	7. Ձևավորիր պինգվինի աչքերը, ինչպես տրված է նկարում:
3	3. Միացրու մարմինը և գլուխը:	8	8. Դեղին կամ նարնջագույն ծեփոնից ձևավորիր եռանկյունաձև կտուց:
4	4. Պատրասիր թևիկները:	9	9. Ձևավորիր երկու միանման դեղին գնդիկներ, հարթեցրու դրանք և վրան մատներ նկարիր:
5	5. Թևերն ամրացրու մարմնի կողքերին:	10	10. Պինգվինի մարմինն ամրացրու թաթերի վրա:

Աշխատանք թղթով և ստվարաթղթով

Առաջադրանք 13. Թղթից խճանկար

Նկարի վրա հավաքիր խճանկար՝ նշված քայլերով:

1. Գունավոր թղթերը պատառոտիր մանր մասնիկների:
2. Դրանք սոսնձիր պատկերի սպիտակ շրջանների վրա՝ հաշվի առնելով ճիշտ գույները:

Առաջադրանք 14. Անձեռոցիկներով խճանկար

Սպիտակ անձեռոցիկի կտորները պատռիր, ձեռքով ճմրթիր, գնդիկներ արա՛, ապա դրանք սոսնձիր նկարի սպիտակ մասերում: Արդյունքում կստանաս ձմեռային տեսարանի խճանկար:

Առաջադրանք 15. Ամանորի բացիկ

ա) Հավելված 3-ից մկրատով կտրիր բացիկի հիմքը և ծալիր նշված տեղից:

բ) Սոսնձիր վրան տարբեր պատկերներ և պատրաստիր Ամանորի բացիկ:



Առաջադրանք 16. Երկրաչափական պատկերներով ապլիկացիաներ

Հավելված 4-ից մկրատով կտրիր տարբեր գույների երկրաչափական պատկերները և սոսնձիր նկարի ճիշտ տեղերում: Ինչ պատկերներ ստացար, անվանիր դրանք: Ասա երկրաչափական պատկերների անվանումները:



Առաջադրանք 17.

Հավելված 5-ից մկրատով կտրտի՛ր պատկերի մասերը և սոսնձի՛ր համապատասխան տեղերում:



✂ Առաջադրանք 18. Չինական գլուխկոտրուկ (Թանգրամ)

Թանգրամի մասնիկների օգնությամբ հավաքիր պատկերները: (Հավելված 6)

1. Կատու



2. Կով



Առաջադրանք 19. Թղթյա կառուցվածքներ

Մկրատով կտրիր կիսաշրջանները և դրանցով հավաքիր պատկերը: (Հավելված 7)

Առաջադրանք 20

Դասընկերոջդ հետ միասին պատրաստիր քառակուսի թղթեր՝ օրիգամի ծալելու համար:

Քառակուսու բոլոր կողմերը հավասար են միմյանց:



ա) Ուղղանկյան մի անկյունը ծալիր այնպես, ինչպես նշված է նկարում:



բ) Մկրատով կտրիր եռանկյունը:



գ) Բացիր եռանկյունը:



դ) Ստացիր այսպիսի քառակուսի:

Առաջադրանք 21. Քառակուսի թուղթը ծալի՛ր նկարում նշված հաջորդականությամբ:

Օրիգամիներ պատրաստելու համար սկզբից հարկավոր է քառակուսի թուղթը ծալել որոշակի հաջորդականությամբ.

Տարբեր գույնի քառակուսի թղթերը ծալի՛ր նկարում նշված հաջորդականությամբ:

1. 

2. 

3. 

4. 

5. 

Առաջադրանք 22. **Պատրաստիր պարզ օրիգամիներ:**

ա) Ծրար



բ) Օդապարիկ



դ) Եռանկյուն



Առաջադրանք 23. Օրիգամիներով կոմպոզիցիա

Նախորդ դասին պատրաստած օրիգամիներից հորինիր կոմպոզիցիա, սոսնձիր տետրի մեջ:

✂ **Առաջադրանք 24.** **Թղթից պատրաստիր համաչափ պատկերներ: (Հավելված 8)**

ա) Տերև



բ) Սունկ



Առաջադրանք 25. Համաչափ պատկերներով նախշ: (Հավելված 9)

ա) Հավելվածից կտրիր գունավոր քառակուսիները, դրանք ծալիր նշված տեղերից և մկրատով կտրիր նկարի եզրագծով: Ծալված մասը բացելով կտեսնես համաչափ պատկեր՝ ծաղիկ կամ տերև: Դրանք միմյանց կողքի շարելով ստացիր գեղեցիկ նախշ:





բ) Գունավոր թղթերից պատրաստիր քառակուսիներ, դրանք ծալիր երկու տակ, ծալված մասի վրա մատիտով գծիր կամայական եզրագիծ և մկրատով կտրիր: Բացիր թուղթը և նայիր ստացված պատկերը:

Առաջադրանք 26. Համաչափ պատկերներից բացիկ

Հավելված 10-ից առանձնացրու ծաղիկի և տերևի համար նախատեսված գունավոր թղթի կտորները, դրանք ծալիր երկտակ, կտրիր նկարի եզրագծով և հերթով սոսնձիր բացիկի հիմքի վրա:





Առաջադրանք 28. Թելից և ստվարաթղթից խաղալիք «Ոսկե ձկնիկ»

Հավելվածից կտրիր ձկնիկի պատկերը, այն տսնձիր ստվարաթղթի վրա, մկրատով կտրիր եզրագծով, այնուհետև վրան գունավոր թել փաթաթիր:
Քո պատրաստած «Ոսկե ձկնիկը» կարող ես ամրացնել տետրում: (Հավելված 12)





Առաջադրանք 29. Աշխատանք թելերով: Թելից տիկնիկներ:

Թելից կարող ես պատրաստել այսպիսի տիկնիկներ և դրանք նվիրել մտերիմներիդ:

1. Վերցրու մի կտոր ստվարաթուղթ և դրա վրա թել փաթաթիր:

2. Ստացված թելի կծիկը հանիր ստվարաթղթի վրայից և կապիր ուրիշ թելով:

3. Առանձնացրու տիկնիկի գլուխը և կապիր մեկ ուրիշ կարճ թելով: Ներքևի մասից թելերը կտրիր մկրատով:

4. Թելերի երկու փունջ առանձնացրու ձեռքերի համար, անհրաժեշտ չափով կարճացրու և թելով կապիր:

5. Թելով կապիր նաև գոտկատեղը:

6. Կարող ես առանձնացնել նաև ոտքերը:

Առաջադրանք 30. Նվերների տուփ:

Հավելվածից մկրատով կտրիր տուփի հիմքը, նշված տեղերից կտրվածքներ արա և սոսնձիր, ինչպես նշված է նկարում: Արդյունքում կունենաս գեղեցիկ տուփ՝ նվերի համար:

Քո պատրաստած տուփը կարող ես ձևավորել՝ վրան գունավոր թղթից տարբեր պատկերներ սոսնձելով (Հավելված 13):



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 2

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

հանրակրթական ուսումնական հաստատությունների երկրորդ դասարանի սովորողների համար

Հավելված 1.

Հավելված 2.



Հավելված 3.



Հավելված 4.



Հավելված 5.



Հավելված 6.



Հավելված 7.



Հավելված 8.





Հավելված 9.



Հավելված 10.



Հավելված 11.





Հավելված 12.



Հավելված 13.